

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 3

ՅՈՒՆԻՍ 2002

bezdlg_mezdlg@hotmail.com

ԱՐՁԱԿՈՒՐԴ, ԲԱՅՑ Ո՛Չ ՑՑԵՍՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ երեխաներ,

ինչ ամսուան ժրաջան աշխատանք է ետք արդեն աւարտած է դպրոցական տարեշրջանը՝ եւ հասած՝ այնքան սպասուած ամրան արձակուրդ:

Անշուշտ ամրան ընթացքին «Պզտիկ-Մզտիկ»ի աշխատանքները պիտի չհանդադիր: Ընդհակառակը: Մեզի հետ պիտի աշխատենք նաեւ ձեռք: Կ'ակնկալենք, որ արձակուրդի պատճառով չնորհիւ ձեր գրութիւններուն, գծագրութիւններուն եւ այլ նիւթերուն տարափը աւելնայ: Ահաւասիկ հետաքրքրական առիթ մը՝ բոլորին հետ բաժնելու ձեր արկածախնդրութիւնները, մտածումներն ու ապրումները:

Ամրան պէս տաքուկ բարեներով.

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»

Ամառնային շրջանին «Պզտիկ - Մզտիկ» պիտի շարունակէ լոյս տեսնել: Մի՛ մոռնաք ձեր գրախանութիւնը այցելելու հետեւալ կարեւոր թուականներուն.

Ուրբաթ, 19 Յուլիս 2002
Ուրբաթ, 16 Օգոստոս 2002

Ուրբաթ, 20 Սեպտեմբեր 2002

Մինչ այդ կրնաք շարունակել ձեր գրութիւնները եւ մրցանքի պատասխանները դրել «Ազդակ»ի խմբագրատուն, «Ճաղպոյխան» կեդրոն:

ԱՄԱՐԸ ԵՒ ՄԵՆՔ



Բելէն Պողոսեան, Զ. դասարան, Արսի Գասարձեան վարժարան:

21 Յունիսէն սկսեալ պայծառ ու կիպիչ արեւը պիտի վայելենք: Նոյն օրերուն պիտի վայելենք նաեւ ամրան ուրախ ու կուարթ արձակուրդը:

Բաճելի է ամառը: Դաս չկայ, պարտականութիւն չկայ, առտուն կանուխ արթննալու հարց չկայ: Չկայ նաեւ դաս չսորվելու պատճառով ճնողքի եւ ուսուցիչի հետ վէճ-վիճաբանութիւն: Այդ բոլոր հոգերն ու մտահոգութիւնները մէկ կողմ նետած կը վայելենք խաղին հաճոյքը, պտոյտին թեթեւութիւնը, բնութեան գեղեցկութիւնը, հեռատեսիլին կախարդանքը, համակարգիչին հետ կապուածութիւնը:

Բաճելի է ամառը...

Սակայն պարզ եղի՛ր... Չկարճես, թէ այնքան ազատ ես, որ վերը նշուածները ազատօրէն կրնաս կատարել: Բոն բնաւ չենք յիշած հայերէն, անգլերէն, ֆրանսերէն կամ արաբերէն գիրքեր կարդալու հաճոյքին մասին: Գիտէ՛իր, թէ ամրան արձակուրդը նաեւ մեր փափաքած գիրքերը կարդալու յարմարագոյն առիթն է: Նաեւ յառաջիկայ

վերամուտին մեզ աշխատասիրութեան ու գիրքին վարժեցնելու ժամանակաշրջանն է: Այդպէս չէ եղած մրջիւնը... Ինք չէր, որ ամրան ընթացքին փոխանակ միայն խաղալու պաշար հաւաքեց, որպէսզի ձեր ամրան աւելի հանգիստ ընէ: Եթէ մրջիւնը այդպէս կրնայ ընել, մենք ինչո՞ւ նոյնը չընենք:

Չմոռնանք նաեւ, որ երբ մենք ամառնային արձակուրդի մէջ ենք, Աւստրալիոյ մէջ ծմեռ է եւ աշակերտները դպրոց կ'երթան: Թերեւս, գիրք կարդալով, պանոնք առանձին չենք ձգեր:

Եկէ՛ք այս տարուան ար-

ձակուրդը անցընելու նոր ձեւ մը որդեգրենք, որպէսզի մեզի օգտակար բոլոր հաճոյքներն ու գործերը հաւասարապէս կատարենք: Երբ դպրոցները փակուին երկու օր հանգիստ ընենք, ապա, առանց մամային ու պապային լուր տալու, դասացուցակի նման ժամացոյց մը պատրաստենք: Այդ ժամանակացոյցին մէջ նշենք, թէ իւրաքանչիւր օրուան իւրաքանչիւր ժամը ինչպէս պիտի անցընենք:

Անցեալ տարի այսպէս ըրած էին Արապն ու Բրակը եւ ուրախացուցած էին իրենց ճնողքը: Բետեւէ իրենց օրինակին:

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ

ԵՐԿՈՒԵԱՐԹԻ, 2 ՅՈՒՆԻՍ 2001

Ժամը 8:00ին՝ Արթննալ եւ անկողին շտկել

Ժամը 8:00 - 9:00՝ Նախաճաշ

Ժամը 9:00 - 10:30՝ Մամային եւ պապային գործերուն օգնել

Ժամը 10:30 - 11:30՝ Երաժշտութիւն ունկնդրել կամ նուագել

Ժամը 11:30 - 12:30՝ Բամակարգիչով վրադիլ

12:30 - 2:00՝ Ճաշ ու հանգիստ

2:00 - 3:00՝ Գիրք կարդալ
3:00 - 4:00՝ Դաստիա-

րակցական խաղերով, ձեռնային աշխատանքով վրադիլ

4:00 - 5:30՝ Բակին մէջ խաղալ (հեճիկ, գնդակ, skate...) եւ պաղպաղակ ուտել

5:30 - 7:00՝ Բեռատեսիլ դիտել

ملحق اذتاك

ՊՋՏԻԿ – ԱՋՏԻԿ ԳԱՍՊԱՐՈՎՆԵՐ



Անթիլիասի մասնաճիւղին մէջ ճատրակի փորձեր կը կատարէ պատանիներու նոր խումբ մը, մարտիչ Խաչիկ Մուրատեանի հսկողութեամբ: Այս պատանիները փայլուն արդիւնքներ կ'արձանագրեն մրցաշարքերու եւ ախոյեանութիւններու ընթացքին: 2002ի Լիբանանի տարիքային ախոյեանութեան Աեդրի կիրակու-

եան 2րդ հանդիսացաւ 10 տարեկանէն վար դասակարգի աղջկանց մրցումներուն, իսկ հրակ Փափապեան՝ 3րդ, 12 տարեկանէն վար դասակարգի տղոց մրցումներուն:

Բ.Ս.Ը.Ս. Անթիլիասի մասնաճիւղին մէջ ճատրակի փորձերը տեղի կ'ունենան Ուրբաթ օրերը, ժամը 6:30ին:

1994էն ի վեր Բ.Ս.Ը.Ս.ի Անթիլիասի մասնաճիւղին մէջ տեղի կ'ունենան ճատրակի փորձեր: Բ.Ս.Ը.Ս. Անթիլիասի ճատրակի պատանի վարպետները տարիներու ընթացքին շահած են բազմաթիւ ախոյեանութիւններ: Օրինակ, Քնարիկ Մուրատեան 5 անգամ շահած է Լիբանանի աղջիկներու ախոյեանութիւնը եւ 1999ին շահած է նաեւ արա-

բական աշխարհի ախոյեանութիւնը: Սիւլան Մուրատեան 3 անգամ շահած է Լիբանանի աղջիկներու ախոյեանութիւնը: Սերժ Յովնանեան 5 անգամ շահած է իր տարիքային դասակարգի ախոյեանութիւնը: Բ.Ս.Ը.Ս. Անթիլիասէն Սազօ եւ Սեւակ Փօլատեաններ նոյնպէս տարիքային մրցումներու մետալներ շահած են:

2001էն ի վեր Բ.Ս.Ը.Ս.

Մարդիկ ճատրակ կը խաղան հարիւրաւոր տարիներէ ի վեր: Բաստատ չենք գիտեր, թէ ո՞ր ժողովուրդը հնարած է այս խաղը, սակայն 6րդ դարէն սկսեալ խաղը տարածուած է հնդկաստանի եւ Պարսկաստանի մէջ:

●1886ին տեղի կ'ունենայ ճատրակի աշխարհի առաջին ախոյեանութիւնը, որուն ընթացքին Բիլիեյմ Սթայնից (Փրակա քաղաքէն) պարտութեան կը մատնէ լեհ

Եոհան Զուքերթօրթը:

●1963 – 1969 տարիներուն աշխարհի ախոյեան կը դառնայ հայ մը՝ Տիգրան Պետրոսեան:

●Բոլոր ժամանակներու ամէնէն վարպետ ճատրակ խաղացողը նկատուող կարի Գասպարով նոյնպէս հայկական ճագում ունի: Անոր մօր ընտանիքը արցախցիներ են: Գասպարով 1985էն մինչեւ 2001 հանդիսացած է աշխարհի ախոյեան:



ԲԱՅԱՍՏԱՆ – ՍՓԻԻՌՔ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

26 – 28 Մայիսին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Բայաստան – Սփիւրք Բ. խորհրդրդաժողովը, որուն մասնակցեցան Սփիւրքի գաղութներուն եւ Բայաստանի հանրապետութեան ներկայացուցիչները:

Խորհրդաժողովին մասնակցողները քննարկեցին Բայաստանի եւ Սփիւրքի քաղաքական կեանքին, տնտեսութեան եւ մշակոյթին հետ կապ ունեցող հարցեր, նաեւ մեծ կարեւորութիւն տրուեցաւ Բայաստան – Սփիւրք յարաբերութիւններուն աւելի եւս ամրացման:

ՆԱԽԿԻՆ ԹՃՆԱՄԻՆԵՐՈՎ՝ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Մ. Նահանգներու նախագահ Ճորժ Պուշ եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին 24 Մայիսին կնքեցին կորիզային պէնքերը նուազեցնելու համաձայնագիր մը:

Այս համաձայնագիրը կարելոր է, թշնամիները այսպիսով կը դառնան բարոյփէտեւ Պաղ պատերազմի ռիսերիմ ղեկամ եւ գործակից:



ՆՈՐ ԵՐԿԻՐ ԱՐՎԵԻԵԼԵԱՆ ԹԻՄՈՐ

Անկախութեան համար մղուած երեք տարուան պայքարէ ետք 20 Մայիսին կազմուեցաւ նոր երկիր մը՝ Արեւելեան Թիմոր: Այս երկիրը նախապէս մաս կը կազմէր Ինտոնեզիոյ: Անոր նախագահն է Խոսէ Կուսմաս՝ նախկին քաղաքական բանտարկեալ մը:

Նորաստեղծ երկրին օժանդակելու համար 27 երկիրներ եւ կազմակերպութիւններ հանգանակեցին 440 միլիոն տոլարի գումար մը: Ասով հանդերձ, Արեւելեան Թիմոր աշխարհի ամէնէն աղքատ երկիրներէն է:



ՄՈՆԻՏԻՆԸ 2002

ՏԻՏԴՈՍԱԿԻՐ ՖՐԱՆՍԱ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ՄՈՆԻՏԻՆԸ

Ուրբաթ, 31 Մայիսին Սեուլի մէջ (Բարաւային Քորէա) տեղի ունեցաւ 2002ի Մոնտիալի բացման պաշտօնական հանդիսութիւնը, որուն յաջորդեց բացման մրցումը՝ Աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին եւ Սենեկալի միջեւ: Այս վերջինը առաջին անգամ ըլլալով էր, որ կը մասնակցէր Մոնտիալին:

2002ի Մոնտիալը սկսաւ անակնկալով, երբ Սենեկալ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրանսան, շնորհիւ՝ Փափե Պուպա Տիոփի կողմէ նշանակուած կողին (30րդ վայրկեանին):

Մրցաշարքին առաջին դեղին քարտ ստացող մարզիկը եղաւ Էմանուէլ Փըթի, որ 45րդ

վայրկեանին ապարարուեցաւ օրուան իրաւարարէն՝ Ալի Մոհամէտ Պուժայիմէն (Ա. Մ. Էմիրութիւններ):

Մրցումին ներկայ էր աւելի քան 62 հազար համակիր:

Այս մրցումէն մէկ օր ետք արձանագրուեցաւ այլ անակնկալ մը, երբ Գերմանիա 8 - 0 արդիւնքով ջախջախեց Սեուտական Արաբիան:

Երկուշաբթի, 3 Յունիսին՝ Խրուաթիա - Մեքսիքա մրցումին, օրուան իրաւարար ժին Լի (Չինաստան) գործածեց մրցաշարքին իր առաջին կարմիր քարտը, երբ դաշտէն վտարեց Խրուաթիոյ յետսպահ Պորիս Զիվքովիչը (59րդ վայրկեանին):

Օր մը ետք, երկու թուրք մարզիկներ Օզալան Ալիպ



Լիպա Ղուարն, 9 տարեկան, Աքսոր Գասարճեան վարժարան (86րդ) եւ հաքան Ունսալ Յունիս 14ին է, որ կ'աւարտին (90րդ), նախանձելով Զիվքովիչի, իրենք եւս ստացան կարմիր քարտեր:

Մրցաշարքը տակաւին կ'ընթանայ մեծ թափով եւ

իսկ ամէնէ մեծ անակնկալը եղաւ տիտղոսակիր Ֆրանսայի դոփս մնալը Ա. հանգրուանէն իսկ, առանց որեւէ կոլ նշանակելու:

ՖՈՐՄԻՒԼԱ 1

Ֆորմուլա 1ի 2002ի աշխարհի ախոյեանութեան Յրդ կրան փրին, որ տեղի ունեցաւ Կիրակի, 9 Յունիսին Մոնրէալի մէջ (Քանատա), վերջ գտաւ Ֆեռարիի գերմանացի վարորդ Միքայէլ Ծումախըրի յաղթանակով (33' 36''):

Ծումախըր այսպիսով իր ասպարէզին ընթացքին արձանագրեց 59րդ յաղթանակը: Ֆեռարիի համար եւս այս յաղթանակը յատկանշական է, որովհետեւ ան շահեցաւ իր 150րդ կրան փրին:

ԲՈՒԱՆ ԿԱՐՈՍ

8 - 9 Յունիսին Փարիզի մէջ (Ֆրանսա) աւարտեցան թենիսի Բոլան Կարոսի տղոց եւ աղջկանց մրցաշարքերը, սպանացի Ալպեր Քոսթայի եւ ամերիկացի Սերենա Ուիլիզմսի յաղթանակներով:




Յատկանշական է, որ տղոց աւարտական մրցումը եղաւ Կուտ սպանական, իսկ աղջրկանցը՝ տեղի ունեցաւ երկու ամերիկացի թոյրերու՝ Վինըսի եւ Սերենայի միջեւ:

ԳԻՏԵՒՐ, ԽԵ...

- Ֆութպոլի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն ընթացքին ամէնէն արագ կոլը նշանակուած է 15 երկվայրկեանի ընթացքին, Մեքսիքոյի մէջ, 1962ին: Կոլը նշանակած է Չեխոսլովաքիոյ կազմէն Վալյաւ Մասէր:
- Ֆութպոլի աստղ, պրազիլցի Փելէ, որ ֆութպոլ սկսած է խաղալ բոպիկ եւ փողոցներուն մէջ, եղած է կրտսերագոյն մարզիկը, որ 17 տարեկանին (1958)ին նշանակած է իր առաջին կոլը:
- Ուրուկուէլի կազմէն Սերժիո Պաթիսթա 1986ին աշխարհի ախոյեանութեան մրցումներուն «յաջողեցաւ» խաղէն դուրս դրուիլ 56րդ երկվայրկեանին:
- 2002ի Մոնտիալին կը մասնակցին 736 խաղացողներ, որոնք բաժնուած են 32 խումբի մէջ:
- Այս Մոնտիալը կ'ընդգրկէ 64 մրցում:
- Բաժակը, որ պիտի տրուի ախոյեան խումբին, երկու անգամ գողցուած է:
- Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի մէջ ՖԻՖԱն մեծ պատառներ վետեղած է, որպէսզի երկար տարիներէ ի վեր ֆութպոլէ վրկուած աֆղանները դիտեն Մոնտիալը:
- Լոնտոնի «Քուինզ» ակումբի կազմակերպած թենիսի մրցաշարքին ընթացքին հայաստանէն Սարգիս Սարգսեան 7-6 եւ 6-1 արդիւնքով յաղթեց աւստրիացի Ճիլիան Քնոուլի:

ՎԵՐՅԻՃԵՑՈՒՄ

Մոնտիալի մրցանքին արդիւնքները լոյս պիտի տեսնեն «Պատիկ - Մատիկ»ի 19 Յուլիսի թիւով:



ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

21 Յունիս 2002ի գիշերը բոլոր տեսակի երաժշտության սիրահարները դարձեալ պիտի հաւաքուին Պէյրուսի կեդրոնը: *Ռափ, ծէպ, ռոք*, դասական եւ աւանդական երաժշտութիւն... Տեսակաւոր ոճեր, բոլոր ճաշակները

համար: Այս տարուան փառատօնին հիւրը ֆրանսական «ժավա» խումբն է, որ պիտի ներկայացնէ հին եւ նոր ոճերով, ռափով եւ ձեռնադաշնակով խառն երաժշտութիւններ:

ԹԱԳՈՒԻՒՆ՝ 50 ՏԱՐԻԷ Ի ԿԵՐ

Բրիտանիոյ էլիզապէթ Բ. թագուհին անցնող շաբաթներուն տօնեց իր գահակալութեան ոսկեայ յորելեանը (50րդ տարեդարձը): 76 տարեկան թագուհին գահ բարձրացած էր 1952ին:



Այս կարեւոր դէպքը Բրիտանիոյ մէջ նշուեցաւ մեծ շուքով: Պաթինկհամ պալատը կազմակերպեց հանրային ձեռնարկներ, բացօթեայ համերգներ, հրավառութիւններ եւ տողանցքներ:

ՆԱԽԿԻՆ ՊԻԹԸԼԶԻՆ

ԱՆԴԱՏԸ՝ ՓՕԼ ՄԱՔՔԱՐԹՅՈՒ ՊՍԱԿՈՒԵՑԱՒ

Նախկին «Պիթըլզ» խումբէն Փօլ Մաքքարթնի (59 տարեկան) երեքշաբթի, 11 Յունիս 2002ին պսակուեցաւ հիթըր Միլիի հետ (34 տարեկան): Պսակի արարողութիւնը տեղի ունեցաւ իրլանտական դղեակի մը մէջ:

ԱՐԵՒՈՒ ԽԱԽԱՐՈՒՄ

Արեւու մասնակի խաւարում տեղի ունեցաւ երեքշաբթի օր՝ արեւաճաղին: Խաւարումը ճաճկեց ինտոնեպիոյ հիւսիսարեւելքը՝ 14,000 քմ. տարածութեամբ շրջան մը: Աւելի շուտ Արեւմտեան Մեքսիքոյի մէջ տեսնուեցաւ արեւու համատարած խաւարում (արեւուն 94 առ հարիւրը ճաճկուեցաւ լուսինով):

● Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, ֆրանսական Աշակութային կեդրոնէն ներս 22-30 Յունիս 2002,



կէսօրէ ետք ժամը 4:00էն 9:00, տեղի պիտի ունենայ գիրքերու ցուցահանդէս-վեճ վաճառք (La Braderie du Livre):

● Պատիկներու գճագրութիւններու եւ շարժապատկերներու ցուցադրութիւն, տոն 2002ին: Փառատօնը,

խամաճիկ ... Բուսական Աշակութային կեդրոնէն ներս, Վերտէն Չորեքշաբթի 26 եւ հինգշաբթի 27 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը 5:00ին:

● «Տը Չայլտ էնտ Ֆէմիլի էքզիպիշըն», պատիկներու յատուկ խաղեր, աշխատանոցներ, ներկայացումներ... 28 Յունիսէն 7 Յուլիս 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին, «Սիուար» (Ջուր Մոսպէն):

● Պալատի միջազգային փառատօնը տեղի պիտի ունենայ 5 Յուլիս - 9 Օգոստոս 2002ին: Փառատօնը,



ինչպէս միշտ, պիտի ընդգրկէ տարբեր տեսակի երաժշտական ձեռնարկներ (դասական, ծէպ, ռեկէյ), պար, ասմունք: Իսկ այս տարուան նորութիւնն է նշանաւոր «Լորտ աֆ տը տէնս» պարախումբին ելոյթը, որ պիտի ներկայացնէ իրլանտական աւանդական պարերը՝ նոր ոճով բեմադրուած:

● Պէյթտոնի փառատօնը

նը պիտի սկսի 3 Յուլիսին եւ պիտի աւարտի 10 Օգոստոսին: Այս փառատօնին առիթը պիտի ունենաք ճաշակելու տարբեր մշակոյթներու երաժշտութիւններ, մեկի ճանօթ աշխարհահռչակ երգիչներ (Նոսէ Քարերաս, Եուսու Նտուր, Նալէտ, Ֆէյրուլ): Պէյթտոնի բեմին վրայ պիտի ներկայացուի նաեւ աշխարհի ամէնէն երկար տեսողութեամբ բեմադրուած երաժշտական թատրոնը՝ «Քէթյ»:



թատրոնի բեմին վրայ պիտի ներկայացուի նաեւ աշխարհի ամէնէն երկար տեսողութեամբ բեմադրուած երաժշտական թատրոնը՝ «Քէթյ»:



ԱՌՈՂՋԱՊԱԿԱԿԱՆ

ԱՐԵՆՈՆ ԲԱՐԵԿԱՄ, ԽԵ ԽՅՆԱՄԻ

Արենուն գոյու- թինը կենսական է մեզի համար: Սակայն, եթե մենք ուշադիր չըլլանք, մ ա ն ա լ ա ն դ ամառնային այս երկար օրերուն, ան մեծ վնասներ կրնայ հասցնել:



Եթե կ'ուզես առանց վնասուե- լու օգտուիլ արեւն, հետեւ այս քանի մը հիմնական թե- լադրանքներուն:

● Ճուրին նստէ առտուան ժամը 11:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 3:00: Այս ժամե- րուն անդրմանիշակագոյն ճառագայթները շատ վտան- գաւոր կ'ըլլան:

● Երբ շուքի տակ չես գտնուիր, շապիկ հագիր եւ գլխարկ դիր: Ասոնք արեւն

պաշտպանուելու ամէնէն լաւ միջոցներէն են:

● Մի՛ վարանիր առատօրէն արեւն պաշտպանող սերեր քսելու մորթիդ վրայ:

● Մի՛ մոռնար նաեւ արեւու ակնոցներդ: Աչքերն ալ շատ վգայուն են:

● Զգուշացիր հովէն եւ ամ- պերէն: Անոնք քեզի կովու- թեան կգայում կու տան, սա- կայն չեն մեղմացներ արեւուն ճառագայթները:

ԱՆԹԻԼԻՍՏԻ ԵՒ ՕՍԳԿԱԶՈՐԻ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԻ ԶՆԵՐՈՒՆ

Obelisk
ԳՐԱՏՈՒՆ

- Գրեցական պիտոյքներ
- Դպրոցական պայուսակներ
- Երկրաչափական յատուկ պիտոյքներ
- Գծագրութեան ներկեր
- Նուէրներու յատուկ բաժին
- Շնորհաւորական քարտեր
- Կաճեթներ
- Ֆոթո - քոփիի սպասարկութիւն
- Դաստիարակչական խաղեր
- Օտար լեզուներով օրաթերթեր, շաբաթաթերթեր եւ ամսաթերթեր

Անթիլիաս, Մար Էլիաս եկեղեցիի ետին, Աթալա փուլին դիմաց:
Տեղ. 04 - 723197 եւ 03 - 881847:



ԺԱՊԱԿԵՆՆԵՐ

Լիբանանեան սրահներուն մէջ արդէն իսկ ցուցադրուող մանուկներու եւ պատանիներու յատուկ «Մոնսթրըրս, Ինք», «Արթերիքս եւ Օպելիքս. միսիոն Բլէոփար» եւ «Ի-թի» ժապաւէններուն վրայ աւելցած են հետաքրքրական նոր ժապաւէններ:

«ՍՓԱՅՏԸՐ - ՄԵՆ».- Բո-



միքսի գիրքերուն հանրաճա- նօթ հերոսը այս անգամ բարձրացած է մեծ պաստառ: Փիթըր Փարքըր (Թոպի Մէկ- ուայըր) երկրորդական վար- ժարանի սովորական աշա- կերտ մըն է, որ տարրալուծա- րանին մէջ կը խայթուի ճինա- յին փոփոխութիւններու են- թարկուած սարդի մը կողմէ: Կարճ ժամանակ ետք ան կ'օժտուի «սարդային» յատ- կանիշներով եւ ֆիզիքական մեծ ուժով: Ան կը պայքարի չար ուժերուն, մասնաւորաբար կրին կոպլինին (Ուիլիըմ Տա- ֆօ) դէմ՝ մարդիկը եւ յատկա- պէս Մէյրի Ճէյնը (Քրիսթըն Տանսթ) փրկելու համար աղէտներէ: Այս տեսակի ժա- պաւէններ սիրողներուն հա- մար հաճելի ժամանց մը:



պիտի տայ ժապաւէնին: Ան- շուշտ այս ժապաւէնին մէջ կարելոր տեղ ունի քլոններու բանակին դէմ մղուած պատե- րապմը:

ԼՈՒՐԵՐ


«ՍԹԱՐ ՈՒՈՐԶ - ԷՓԻԶՈՏ II ԸԹԵՔ ԱՅ ՏԸ ՔԼՈՆԶ».- Գի- տաբեւակայական «Սթար ուորլդ» ժապաւէններուն շար- քին նոր անդամին մէջ Անաքին Սթայուոքըր (հայտըն Քրիս- թընսըն) դարձեալ կ'աշակեր- տէ Օպի-Ուան քենուպիի (Էուան Մաք Կրէկըր): Անոր եւ Փատմէ Ամիտալա թագուհին (Նաթալի Փորթմըն) յարաբե- րութիւնը կարելոր ընթացք մը

«ՍՓԱՅՏԸՐ- ՄԵՆ 2».- «ՍՓԱՅՏԸՐ- ՄԵՆ»ի գտած մեծ յաջողութենէն խանդավառ՝ անոր արտադրիչները արդէն իսկ սկսած են անոր երկրորդ բաժինին պատրաստութեան: Թոպի Մէկուայըր եւ Քրիսթըն Տանսթ դարձեալ պիտի խա- դան կարելոր դերերը:







Ո՛վ պիտի կարենայ հասնիլ հովանոցին եւ արեւէն պաշտպանուիլ:



Կրնա՞ս օգնել Պպտիկ - Մպտիկին, որ 1 - 39 կէտերը իրարու միացնելով գտնէ պահուած պատկերը:



Կրնա՞ս օգնել Պպտիկ - Մպտիկին՝ իր գուլպաները շարելու ամէնէն մեծէն մինչեւ ամէնէն պպտիկը:



Աւելի քիչ ճերմակ, թէ սեւ տուփիկներ կան:

$$\triangle + \triangle + \triangle + \triangle + \triangle = 20$$

$$\triangle \times \triangle = \bigcirc$$

$$\bigcirc : \square = \square$$

$$\triangle \times \square = \square$$

$$\triangle = 4 \quad \bigcirc = 16 \quad \square = 2 \quad \square = 8$$



Կրնա՞ս գտնել պատասխանները:

Նախակրթարանի Դ. դասարանի խմբային աշխատանք, Գ. Զաթալպաշեան վարժարան

Ժամանցի պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»-ի ճաբաթ, 15 Յունիս 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

Ժ Պ Ի Տ

Ուսուցիչը կը հարցնէ աշակերտին.-

- Ի՞նչ կը նշանակէ նահանջ տարի:
- Դպրոց գալու անելո՞րդ օր մը.- կը պատասխանէ աշա-

կերտը տխրութեամբ:

...

- Զաւակդ մի՞շտ թոթովախօս է:
- Չէ, միայն խօսած ատեն:

...

- Գօգօ, սունկ կը սիրես:
- Ծա՛տ:
- Իսկ գիտես, որ թունաւոր սունկեր կան:
- Անշուշտ:
- Իսկ ինչպէս կրնանք գիտնալ, թէ թունաւոր են կամ ո՛չ:
- Ծատ պարզ է, կ'ուտես եւ կը սպասես:

...

- Ինչպէս է ձեր տղան: Խօսիլ սորվեցա՞մ:
- Այո, բայց հիմա անոր լռել կը սորվեցնենք:

հաւարեց՝ ՆԱՐԷ ԲԱՌԱԹԵԱՆ
(Զ. դասարան)

ԱՄՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք հասցնել «ԱԶԴԱԿ»-ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցանքը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 3

- 1) Ճատրակի աշխարհի առաջին ախոյեանութիւնը երբ տեղի ունեցած է: -----
- 2) Ո՛վ նշանակեց 2002ի Մոնտիալի առաջին կողը: -----

3) Ո՞ր ժամերուն նախընտրելի է արեւուն տակ չմնալ: -----

Անուն - Մականուն -----
 Վարժարան -----
 Ծննդեան թուական -----
 Բեռածայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 2Ի ԾԱԹՈՂԸ

Սագօ Դաւիթ (11 տարեկան, Աքսոր Գասարճեան վարժարան) շահեցաւ անցեալ ամսուան մրցանքը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»-ի խմբագրատունէն, «Ճաղոյեան» կեդրոն:



հայաստանի մէջ երկու տարիէ ի վեր կը հրատարակուի «Արեւածաղիկ» գունաւոր ամսաթերթը, որուն բոլոր խմբագիրները եւ թղթակիցները ձեռքով չափ պատանիներ են: Անոնք ունին իրենց ակումբը, թատերախումբը եւայլն:

Դուք ալ չէք մտածեր փոքրիկ լրագրողներ ըլլալ ձեր հայաստանցի ընկերներուն պէս...

Փափաքողները թող դիմեն «Պատիկ-Վատիկ»ին:

ԻՆՅ ԱԻՆՏ. ԹՈՐՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ



Անցեալ տարուան յաջողութենէն քաջալերուած այս տարի եւս մասնակցութիւնս բերի վարժարանիս կողմէ պատրաստուած յայտագիրին՝ պարախումբին եւ երգչախումբին մաս կազմելով: Ծիծղը շատ ալ դիւրին չէր ամբողջ տարի մը հետեւիլ թէ՛ երգչախումբի եւ թէ՛ պարի փորձերուն: Սակայն կարելի չէր մերժել: Եթէ ես չմասնակցեի, միւսը չմասնակցեր, հապա ինչպէս պիտի պատրաստուէր գեղեցիկ յայտագիր մը, որ պիտի ներկայացուէր մեր թանկագին ճնողներուն եւ հարապատներուն:

Ելոյթին օրը ճշդուեցաւ Ուրբաթ, 19 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 8:00ին: Չէ, այլեւս քիչ մը եւս լուրջի պէտք էր առնուէր հարցը: Տոմսերը բաժնուեցան: Սրտատրոփ սպասեցի այդ օրուան: Երջանիկ էի: «3. Տէր Աելքոնեան» սրահը լեփ - լեցուն էր հանդիսատեսներով: Կազմ ու պատրաստ էինք վարագոյրին ետեւ: Ջոյգ քայլերգներէն ետք հանդէսը սկսաւ երկու եղբայրներու զուարթ երկխօսութեամբ: Լայն ժպիտներ գծագրուեցան հանդիսատես-

ներուն դէմքերուն վրայ: Երգեցինք հայերէն եւ արաբերէն սրտառուչ երգեր, պարեցինք, պարեցին նաեւ ուրիշներ, բոլորն ալ ծիգ թափելով՝ իրենց լաւագոյնը տալու համար: Ամուսններ, ներկայացում, բոլորը հմայուած էին, այդ մէկը բացորոշ էր: Սակայն բան մը կը չարջարէր միտքս. արդեօք ինչպէս կրնայի գտնել մայրս ու հայրս. աչքերս ի վտր կը պտտցնէի վեր ու վար, աջ ու ձախ: Սակայն ինչքէ՛ յոգնեցնէի ինքզինքս. չէ՛ որ բոլորն ալ հայորդիներ էին. բոլորը մե՛ր ճնողները:

Բանդէսը վերջ գտաւ բուն ճափահարութիւններով: Յաջող էր ամէն բան: Ուրախ էի ո՛չ միայն հանդէսին յաջողութեան, այլ նաեւ՝ բեմ ելած ու մասնակցած ըլլալու համար: Փորձառութիւն մըն էր, որ շահած էի: Պիտի չմոռնամ այդ օրը, որ յիշողութեանս մէջ պիտի մնայ միշտ թարմ ու գեղեցիկ:

ՆՈՒՇՈՎ ՊԱՋԱՐԵԱՆ
Զ. Կարգ
Թորոսեան վարժարան


ԹՐԱՏԻ ԻՆՅ ԱԻՆՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ «ՔԵՐՄԷՍ - ՊԱՋԱՐ»Ն




Ճարաթ, 1 Յունիս 2002ին, տեղի ունեցաւ Թրատի Ինյ Աւետարանական վարժարանի կազմակերպած «Քերմէս - պապար»ը, վարժարանին վարդարուած շրջափակէն ներս, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00: Մեծ թիւով աշակերտներ, ճնողներ եւ հիւրեր անցուցին շատ ուրախ եւ հաճելի ժամեր:

● Եթէ արջերը ութ ոտք ունենային, այնքան արագ պիտի վազէին, որ բոլորին պիտի յաղթէին եւ պիտի շահէին առաջնութիւնը:

● Եթէ հսկայ կէտը աւառները լուար, քանի խոլանակ պիտի գներ... Ինչ բախտ՝ խոլանակ ճախողներուն:




● Եթէ կրկեսի փիղերը իրենց կնճիթին ճայրը ձեռքեր ունենային, ինչ ճարպիկ լարախաղացներ կ'ըլլային:




● Եթէ ընգղան նուագել գիտնար, առանձին նուա-

գախումբ կրնար կազմել ու նուագել, տօ - մի - սօլ - պիտի վազէին, որ բոլորին պիտի յաղթէին եւ պիտի շահէին առաջնութիւնը:



● Եթէ կատուները բուսնէին, պարտէլիս մէջ կը պանէի եւ խնդալէն կը մարէի...



ՆԱՆԱՐ ՊԱՐԻՊԵԱՆ
Ե. դասարան
Մ. եւ Բ. Արսլանեան
Ճեմարան



Յարութ Մելքոնեան, 12 տարեկան,
Արսոր Գասարձեան վարժարան:

ԱՐԵՒՐ

Արեւելաւ, աշխարհը լուսաւորեց.
Աշխարհը՝ ուրախ, ու մարդիկ՝ կմայլած:

Դուն՝ ամպերուն ետեւէն ճագած արեւ
Իմ աշխարհս շողով լուսաւորած:

Եղեւնին գտած ընկերը կանաչ,
Ուրախ ու երջանիկ աշխարհին մէջ:

Աշխարհն ուրախ-վուարթ կ'երգէ ահա
Իսկ անասուններն ու մարդիկ՝ հրճուած:

ԼԱՐԱ ՃԱՆՆԱԳԵԱՆ
Դ.2 դասարան
Եղիշէ Մանուկեան



Արիկ Արրահամեան, Մ. Ե. Բ. Արսլանեան Ճեմարան

Կիրակի կէսօրէ ետք պատահեցաւ դէպքը:
Կը քալէի համրայի մէջ: Օդը տաք էր եւ գայեր էի պաղպաղակ ուտելու:

Յանկարճ ուշադրութիւնս գրաւեց Ամերիկեան համալսարանի մուտքին, խաւաքարտի վրայ պառկած աղքատ ու խեղճ մարդ մը, որ ճամբան մնացած էր: Ան քովը ունէր շիշ մը ջուր եւ տոպրակի մը մէջ դրուած հագուստներ: Բագած էր մաշած եւ հին կգեստներ:

Մարդիկ կ'անցնէին անոր քովէն՝ ետեւ կը դառնային ու դարձեալ կը նայէին այդ խեղճ, աղքատ ու անօթի մարդուն:

Թաղը լեցուն էր «ֆէւթ ֆուտ»ի տեսակաւոր ծաշարաններով, որոնց սպասեակները սկսան աղքատ մարդուն ծաշ տալ:

Նոյն պահուն, մարդը արագօրէն տեղէն ջատկեց եւ դրամի փոխարէն վճարեց իր քովի ունեցած ճամոնները:

ՍԱՆԱԲԻՆ ԳԱՍԱՊԵԱՆ



Մէլրի Պօղոսեան, 13 տարեկան,
Արսոր Գասարձեան վարժարան

ԳԻՏԵՐՐ, ԽԵ

– Աշխարհագէտ եւ ծանապարհորդ Ռիտտէր Բայաստանի մասին ըսած է. «Օդով, ջուրով հարուստ լեռնային կով կղզի մըն է Բայաստանը»:

– Բոլոմ հիմնուած է 753 թուականին Ք. Ա. Բոմոլոս եւ Բոմոս կոյճ եղբայրներուն կողմէ, որոնք մայր գայլէ մը սնանկէ ետք կառուցած են քաղաքը եւ հոն իշխած: Այսօր Բոլոմի մուտքին գայլի պրոնկեայ արձանը խորհրդանիշն է քաղաքին:

7 բլուրներով շրջապատուած մեղրագոյն քաղաքը ծանչցուած է նաեւ «աղբիւրներու եւ մարմարներու քաղաք» անունով:

Բաւարեց՝ ԱՍՕ ԽԱՆՃԵԱՆ

Զ. դասարան

Ազգային Գէորգ Զաթալպաշեան

«Պլատիկ – Մկաթիկ»-ին գրեցիլին
Գեօգր. Անահայկ Փայլեան (ԱՕԽԻ գրադարան),
եւ Սեպուհի Բիշուեան:

Ցեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝

bezdig_mezdig@hotmail.com

կամ յանձնել՝ «ՊՋՏԻԿ-ԱՋՏԻԿ»-ի

խմբագրութեան «ԱՋՊԱԿ»

«Ճարտչեան» կեդրոն: